

ՍՈՄԱ,

I

Որպես փուրձը Գանգեսի,
Կարոտակեզ, սիրակեզ —
Կյաննես տվե՛լ եմ լույսիդ
եզ երգում եմ քեզ:
Քե՛զ եմ երգում ես կարմիր
Աշխարհում հիմա,—
Քե՛զ եմ երգում, քա՛ղցր փուր,
Խելագա՛ր Սո՛մա:

II

Դարեր շարունակ, անվերջ, անդադրում,
Ու սիրտս — զարուն,
Կյաննես երգ շինած՝ քե՛զ էի փնտրում
Այս չար աշխարհում:

Ու չէի գտնում, Սո՛մա, ո՛չ մի տեղ
Քո դեմքը հրե,—
Բայց ես գիտեի, որ մեռնում է նա,
Ով որ քեզ սիրե:

Ու սիրտս տված մահի անուրջին,—
Մա՛ն էի տենչում,—
Բայց տեսա հանկարծ քո դեմքը վերջին
Այս աղչամուղչում:

Քո դեմքը տեսա, որպես սրբազան
Մի զոհաբերում.
Քո դեմքը տեսա աշխարհասասան
Այս հրդեհներում:

Եվ ֆեզնով հարբած՝ կանչեցի՝ նրանց
Հրդեհի պարիս, —
Եվ կյանքս տվի, պարզ ու սրտաբաց,
Վառվող աշխարհին...

III

Սո՛ւմա, ես գիտե՛մ մի աղջիկ ես դու,
Երկնային մի բույր,
Որ տալիս է մեր սուրբ ծաղիկներին
Թույն, բախիժ ու բույր:

Երկնփից իջած ֆո ցո՛ղն է սերում
Բույսերը բոլոր.
Քո՛ւյր, ապրում ես դու մեր սուրբ բույսերում
Քաղցր ու ահավոր:

Մենք այդ բույսերից խմիչք ենք շինում,
Գինի հրակեզ,
Եվ այդ սրբազան խմիչքով հարբած —
Ցանկանում ենք ֆեզ:

Վառվում ես, Սո՛ւմա, մեր երակներում
Դու, որպես գինի, —
Եվ ֆեզնով հարբած ուզում ենք մենք էլ,
Որ այս աշխարհում ֆո կամքը լինի...

IV

Սո՛ւմա, օ, Սո՛ւմա, սրբազան խմիչք,
Սրբազան դու սեր,

Ոգևորության դու ֆա՛ղցր գինի,
Երկունքի գիշե՛ր:

Արշալույսների սրբազան արգանդ,
Ոգու Կաթն Միր.
Արևից առաջ դո՛ւ երկնից անցար,
Ոսկի փոեցիր:

Օ, սրբազան հա՛րս դու ազատության,
Գու — ազատություն,
Գու — վերջին ցնորք վերջի՛ն ֆաղցրության,
Գու ոգու խնդում:

Գո՛ւ, որ սրտերում փրփրում ես վառ,
Հոսում ես արագ,
Ու փրփուր-փրփուր եփելով սրտում
Վառվում ես հանկարծ, դառնում ես կրակ:—

Սո՛՛մա, օ, Սո՛՛մա, օրհնվի՛ թող այն
Վայրկյանը կարմիր աշխարհում այս շար,
Երբ մարդու սրտում առաջին անգամ
Հրի փոխվեցիր ու Ա՛գնի դարձար...

Ու հրդե՛ն դառար, ու կրակ, ու հուր,
Մտոից ծփալով — անցար աշխարհին,
Եվ կյանքը այս շար, այս կյանքը ախուր
Հանձնեցիր հրին:

Մփում ես հիմա մարդկանց սրտերում
Ու ողջ աշխարհում հրդեհ ես վառել.
Քո՛ւյր, դո՛ւ ես միայն թխպոտ օրերում
Մեզ մխիթարել...

Վառե՛լ ենք հիմա աշխարհը նորից,
Ուխտի ենք ելել խենթ ու խելագար...
Օրհնվի՛ թող քո անունը նորից,

Որ հուր դարձեց մեր սրտերը ֆար:
Հուրդ մեր սրտում բող սուրբ փրփրի.
Խմե՛լ ենք արդեն, ելել ենք պարի,
Խառնել ենք իրար հիմա կյանք ու մահ.
Բորնկվի՛ր կրկին ու կրկին անգամ,
Վառվի՛ր մեր սրտում, ծփա՛ արնաֆամ,
Խելագա՛ր Սո՛մա...

V

Քո՛ւյր, քո գինիքն մեր սրտերում
Մխացել է դա՛ր ու դարե՛ր.
Քո՛ւյր, քո գինիքն մեր սրտերում
Քանի՛ ոսկի ջան է վառել...
Քանի՛ ոսկի ջան է վառել
Երկրի մուժում,
Քանի՛ ոսկի ջան է վառել
Կյանքի փռչում:
Դա՛ր ու դարե՛ր մեր սրտերում
Վառվել է վառ,
Բայց հրդեհվել չի կամեցել
Աշխարհը ֆար:

Ո՛վ չի տեսել. երբ իջնում է քանձր գիշեր —
Շիրիմներից դուրս են բռչում ոսկի լույսեր:
Փռչացող ոսկորներից լույս է ծորում.
Գինի՛դ է այն, որ չի վառվել մարդու օրում:
Գինի՛դ է այն, որ զուր հուզվել, բայց չի՛ վառել՝
Գինի՛դ է այն, որ մարդ իր հետ վա՛ր է տարել.

Ու գիշերի քանձր մթնում —
Հրե մի սուտ —
Դուրս է բռչում գերեզմանից՝
Վառվում է զուր...
Սո՛մա, գինիդ, որով հարբել,
Խենթ ենք հիմա —

Գա՛ր ու դարե՛ր ավել է մեզ
 Երկունն ու մահ,
Մա՛ն է ավել ու գերեզման,
 Հող ու անհուն —
Որ դուրս բռչի, ազատ վառվի —
 Գերեզմանում...
Ու չէր վառվում դա՛ր ու դարեր
 Աշխարհը քար.
Հիմա վառվեց... Խե՛նք ենք մենք էլ
 Ու խելագար: —

Պա՛ր ենք բռնել խելագար,
Հրդեհում ենք ու վառում —
Այն ամենը, ի՛նչ որ կար
Հազարամյա աշխարհում:
Ու արյունը մեր՝ խառնրված հրին՝
վառվում է ագահ, —
Ու լույս է տալիս վառվող աշխարհին
Գեմֆդ հեռակա:

VI

Ու դառնում է մեր շուրջպարը արագ,
Եվ մեր շուրջպարում — հրդեհի պարում
Հեֆիա՛թ է կյանքը, ու մարդը — կրակ:

Հրքի՛ն-հրքի՛ն վեր են բռնում
Կյանքերը մեր կարեկեր,
Ու վառվում է աղջամուղջում
Ողջակիզվող սիրտը մեր:

Ամբոխները գրահապատ
Ծափ են գարկում ու պարում,
Ջա՛ն է դարձել ամեն մի մարդ
Կրակապատ աշխարհում:

Ու պար բռնած ու խելագար
Ե՛րգ ենք ասում կրակին —
Ու վառվում է աշխարհը քար
Մըրիկներում կրակի:

Կիրակի է կյանքն հիմա —
Ջահագարդվա՛ծ, կրակուն —
Ու պարում են կյանք ու մահ
Սո՛ւմա, քո սուրք կրակում...

VII

Հե՛յ, հեռավոր ընկերներ ու եղբայրներ, —
Գու՛մ չե՛ք լսում. ձե՛զ ենք կանչում, —
Զվարք ու սեզ,
Եկե՛ք, մտե՛ք շուրջպարը մեր —
Եկե՛ք, եկե՛ք:

Օ՛, կո՛ւյր է նա, ով շի տեսնում
Երկինք հասած կրակը քեժ.
Եկե՛ք, եկե՛ք, ով սիրտ ունի
Ողջակիզվող ու հրակեզ:
Ով որ եկավ — պետք է իր հետ
Ողջակիզվող մի սիրտ բերի —
Եկե՛ք, հսկա պարը մտե՛ք
Աշխարհային հրդեհների:

Ու ծավալվի՛ թող
Աշխարհովը մեկ
Հրդեհը մաքրող,
Բոցը հրաշեկ:

Կյանքը հեռավայր,
Որ մխում է գուր —
Թող մոխի՛ր դառնա
Ու անցնի ի գուր:

Հո՛ւրբ բող մնա,
Հրդեհը հոգու,
Ու հրաշք դառնա
Սո՛մա, խոսքը քո:

VIII

Ու գալիս են անվե՛րջ, անվե՛րջ
Ամբոխները ահագին,
Որ կյանքը հին ու սնամեջ
Ողջակիզեն կրակին:

Ու հուրն ընկած, անդարձ, անել,
Այրվում է կյանքը քար —
Ու հրդեհում պար են բռնել
Ամբոխները խելագար:

Ու արյունը մեր, խառնըված հրին,
Վառվում է հրում՝ զո՛հ է սրբազան —
Ու ժպտում է քո դեմքը աշխարհին
Այս հրդեհներում աշխարհասասան...

IX

...Թվում է հիմա կյանքը իմ հոգուն
Մի ոսկի տեսիլ.
Ինչ լա՛վ է, Սո՛մա, որ կյանքի հոգուն
Հիմա՛ եմ հասել.
Ինչ լա՛վ է, Սո՛մա, որ քո կրակում
Վառվում եմ ես էլ...

Կվառվեմ հիմա, որպես զոհ կամֆիդ
Ու զոհարեցում,
Եվ եթե մարի հրդեհը այս մեծ,
Որ շունի մարում —

Դու էլի՛ հագար հրդեհ կվառես
Այս չար աշխարհում...

Սո՛՛մա, սերը քո բույն է ու գինի,
Բայց քա՛ղցր է այնքան.

Սո՛՛մա, կաս դու միշտ, բայց անցնում եմ ես
Ու վաղը չկամ.

Սո՛՛մա, աշխարհում բող կամֆդ լինի
Տիեզերական:—

Կյանքս կմարի՛ հին, չնչին մի կայծ
Քո ոսկի հրում —

Բայց վառվի՛ պիտի սիրտս մոխրացած
Քո բոլո՛ւր գալիք արշալույսներում...